

ԴՐԱՆԻԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՎԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՐԵՖՈՐՄՆԵՐԸ

II

15-Ն ՅՈՒԼԻՍԻ 1895 թ.

ՄԵՆՔ ասացինք, որ Ներկայումս երովական պետութիւնների շահերը պահանջում են՝ պահպանել Փոքր Ասիայում քաղաքական ներկայ պայմանները, ստացած որովհետև Եւրոպայի թէ քաղաքական և թէ հասարակական յարաբերութիւնները գտնում են այնպիսի փափուկ և վտանգաւոր դրութեան մէջ, որը ներկայ պետութիւններից խստօրէն պահանջում է խոյս տալ պատերազմից, որի բորբոքիլը սպառնում է առաջ բերել ամրող քաղաքակրթւած աշխարհում սօցիալական յեղափոխութիւն։ Այս վտանգն է, որ ստիպում է պետութիւններին փոխադարձ զիջումներով, արչեստական միջոցներով ճգճգել ներկայ խաղաղութիւնը, խաղաղութիւն, որի հիմքը այնքան խախուտ է, որ շատ երկար չի տեիլ և մի սարսափելի դղողոցով կը փլւի՝ իր տակն անելով միլիոնաւոր զոհեր, ահագին հարստութիւններ. . .

Եւ ինչպէս չսարսափի դրանից պառաւ Եւրոպան, որ նոյնպէս հիւանդ է, ինչպէս բաշիբուզուկ սուլթանի կառավարութիւնը. . .

Այժմեան պետութիւնների կեանքում սկսւել է փրտածութիւն, նեխութիւն, նրանց ներքին կեանքը քայքայման շրջանի մէջ է մոտել. այս շատ լաւ գիտէ իւրաքանչիւր պետական մարդ դիպլօմատ, բայց և այնպէս նրանք գործ են դնում ամեն միջոց, մարդկային բոլոր ոյժը ողքան հնարաւոր է ճգճգելու, պահպանելու իրերի ներկայ դրութիւնը, որ ճակատագրաբար դէպի անկումն է գնում, և այդ շատ բնական է։ Ինչպէս անհատական կեանքում կայ „դրութեան կոիւ“, կայ և հաւաքական կեանքում. — նոյնանման շահեր ու նեցող անհատները բնականօրէն համախմբում են

մրցելու, իրենց գոյութիւնը պահպանելու մի այլ խմբի՝ հաւաքական ոյժի դէմ։ Այս երկու խմբի շահերը հակառակ լինելով միմիանց, նրանց մէջ մղում է նհաւաքական գոյութեան կոիւ՝ բացի անհատականից, և այդ գասակարգային կոիւն է, որ մեր օրերում՝ գործարանական, մեքենաների շրջանում՝ քաղաքակրթւած աշխարհում հասել է իւր բարձր աստիճանին։

Այս այս գասակարգային կոիւն է, որ քայքայում է ներկայ պետութիւնների կեանքը, այս գասակարգային կոիւն է, որ այսօր քաղաքակրթւած երկրների հասարակական ու քաղաքական կեանքին սպառնում է մի այնպիսի փոթորիկ, որ տակն ու վըայ պիտի անի ամենայն ինչ արմատապէս փոխելով թէ սնտեսական ու քաղաքացիական յարաբերութիւնները և թէ մարդկային հասարակութեան ամբողջ կազմակերպութիւնը։ Եւ այդ մօտալուս փոթորիկն է, որ զարգանում է հսկայական քայլերով սարսափեցնում քաղաքակրթւած աշխարհը. այդ վտանգն է գլխաւորապէս, որ ստիպում է պետութիւններին զինւել քամել երկրի ամրող հիւթը, սպառել նրա ոյժը, մնիել միլիարդներ զինւորականութեան համար, որպէսզի ո, ժ ի միջոցով կարողանան խեղճել սպառնալիքը, ճնշել փոթորիկը՝ պահպանելու իրերի ներկայ դրութիւնը, հասարակական ներկայ պայմանները, պայմաններ, որոնք ստեղծւած են հովանաւորելու տիրող դասակարգի շահերը, որ ասել է թէ պահպանելու և ներկայ պետութիւնների շահերը, նրանց գոյութիւնը։

Իսկ միւս կողմից իւրաքանչիւր պետութեան գրկում զարգացող անհատական արդիւնագործութիւնը, պահպանում է նրանից բանալ, հաստատել վաճառնոցներ, շուկաներ արտահանութեան համար, վնտել, նըւածել երկիրներ շահագործելու, հակառակ դիպւածում նրան սպառնում է մնանկութիւն։

Խոշոր արդիւնագործութեան այս բնաւորութիւնն է, որ աւելի և աւելի զարգացնում է գասակարգային կոիւը ու սրան տակիս սուր բնաւորութիւն և համ էլ



ստիպում, պահանջում է պետութիւններից՝ դուրս գալ մայր-երկրից, նւածել երկիրներ և փնտրել, հաստատել գաղութներ, կօլոնիաներ, ինչ գնով էլ լինի: — Նրանք պատերազմում են, զոհում բազմաթիւ զաւակներ, երիտասարդ կեանքեր, ոչնչացնում մարդկային վայրենի ցեղեր, մտնում ամենաանառողջ երկիրներ՝ արտահանութեան, շահագործութեան համար: Եւ նրանք անում են այս բոլորը իրենց գոյութեան համար, նրանք անցնում են դիակների վրայով՝ կեղեքելու, որովհետեւ այդ է պահանջում նրանց գոյութիւնը, այդ է պահանջում անհատական խոշոր արդիւնագործութիւնը:

Իսկ Տաճկահայաստանը այս տեսակէտից թէ իւր հարստութիւնով և թէ իւր աշխարհական դիրքով ներկայանում է իրոն շահաւետ երկրներից մէկը, առանձնապէս երկու պետութիւնների՝ Անդիայի և Խուտիայի համար: Արդէն Հայոց պատմութիւնից էլ յայտնի է, որ Հայաստանի դժբանտութեան պատճառներից մէկը իւր աշխարհագրական դիրքն է, իրոն դուռը, իրու Արևելքի և Արևմուտքի ճանապարհ, որի վրայով անցել են Ասիայից Եւրոպա արշաւող բոլոր վայրենի, բարսարու ցեղերը՝ կոտորած ու սրածութիւն անելով: Նա, Հայաստանը, այս տեսակէտից էլ այսօր պահպանել է իւր սյժը. նւածելով գրա վրայով էլ է ուզում անցնել Խուտիան ընդլայնելու իւր սահմանները, իսկ Անդիան, իրու Խուտիայի մշտական հակառակորդը Արևելքում, այդ տեղ էլ է ուզում նրա առաջն առնել, արգելք լինել նրա շահագործական ձգտումներին, ի հարկէ ոչ թէ մարդաօրիական զգացումներից գրդած, այլ՝ որ նա միասում է իրեն: Հայաստանը միևնոյն ժամանակ միացնում է և Սև ծովի րայտնի ու նրա հետ կապւած արդիւնագործութեան վաճառահանութիւնը Պարսկաստանի հետ՝ Տրավիլինի-Իրադումի-Թաւրիզի գծով: Հայաստանի այս դիրքի և բնական հարստութեան պատճառով է, որ Եւրոպական պետութիւններից իւրաքանչիւրը ձգտում է իրեն համար ունենալ ազատ ճանապարհներ, բանալ շուկաներ ու շահագործել այս պատճառով է, որ իւրաքանչիւր պետութիւն ունի իւր որոշ շահերը, բայց, ինչպէս ասացինք, Անդիան և Խուտիան, համեմատաբար միւսների հետ, Հայկական խնդրում առանձին դիրքի մէջ են, իրու Արևելա-Արևմտեան պետութիւններ, որոնք անհամեմատ միւսներից աւելի մծ շահեր ունին Արևելքում: ուստի և սրանք աւելի են հետաքրքրւած Հայկական խընդրով, Հայկական շարժումով: Բացի սրանից Հայաստանի վիճակը կապւած է Տաճիկ պետութեան վիճակի հետ, իսկ սրանը Արևելեան հարցի և Եւրոպայի ու Արևելքի պատմութիւնը, որոնք անհամեմատ միւսներից աւելի մծ շահեր ունին Արևելքում: ուստի և սրանք աւելի տալ...

ուետութեան, կոբչում է ներկայ քաղաքական հաւասարական խաղաղութիւնը, որը Եւրոպական խաղաղութիւնը վըրդովութիւնը ամենավտանգաւոր Փակտորներիցն է և այս պատճառով է, որ պետութիւնները աշխատում են Փոքր Ասիայում պահպանել statu quo: Պարզ է ուրիշն, որ սուլթանի կառավարութեան գոյութիւնը, նրա ամբողջութիւնը պահպանելը ներկայում մի անհրաժեշտութիւն է Եւրոպական պետութիւնների համար՝ իրում մի պատնէշ հակառակորդ ոյժերի մէջ. մի թեթև խանգարումն անդամ մէկի կողմից կարող է առաջացնել ընդհարում ոչ թէ երկու գլխաւոր հակառակորդների մէջ, այլ մի միջազգային պատերազմ, ջնորհիւ այն կապակցութեան, որ պետութիւնները միացած են միմիանց հետ՝ Գերմանիա-Աւստրիա-Իտալիա, Ռուսիա-Ֆրանսիա, Անդիա-Խուտիա: Մը վրայ աւելացրէք և այն, որ սրանց Եւրոպական յարաբերութիւններն էլ նոյնպէս միշտ լարւած գրութեան մէջ են, որովհետեւ շահերի ընդհարում տեղի են ունենում նոյնպէս և Եւրոպական հողի վրայ. միւս կողմից էլ, չպէտք է ուրանալ և աղդային ինքնասիրութիւնը, շունչնիզիլը...

Ահա այս տեսակ փափուկ, կնճռուտ, բարդ, լարւած և վտանգաւոր պայմանները ու յարաբերութիւններն են, որ ստիպում, պահանջում են Եւրոպական պետութիւններից փոխադարձ զիջումն անել որպան հնարաւոր է ներկայ խաղաղութիւնը պահպանելու, որովհետեւ, որ կէտի վրայ էլ ընդհարում լինի Եւրոպայում թէ սրանից դուրս՝ առաջ է բերելու միջազգային պատերազմ, որից սահմանափում, զարհուրում է իւրաքանչիւր քաղաքակրթւած պետութիւն, որովհետեւ, թիզվէս ասացինը նրանց սպառնում է միջազգային սօցիալական յեղափառութիւնը:

Եւ ինչ կասկած, որ „մարդասէր“, „քաղաքակրթւած“ ներկայ պետութիւնները զոհ կը բերեն ոչ միայն մի ամբողջ ժողովուրդ, այլ մի քանի ժողովուրդներ իրենց շահերի համար, չայտիած էլլինելու Եւրոպական խաղաղութիւնը, հանդիսատես չլինելու սարսափելի՝ մինչև այսօր մարդկութեան կեանքում չտեսնեւած հասարակական կատաստօֆային, ականատես չլինելու իրենց „հասարակական մահւան“: թէև պատմութիւնը և մարդկութեան կեանքի զարգացման օրէնքները իրենցն են անելու ստիպելու ներկայ պետութիւններին խոնարհել իրենց առջև և տեղի տալ...

Հայութ

ԴԱՒԱՌԱՆ Մ. ԹԻՒԹԻՒՆՑԻՎԻ

ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Կեդրոնական Կօմիտէն մայիս 7-ի իր 61-դ նստին մէջ, որ հաւաքական վճիռ մը գումարւած էր քանի մը անձերու նկատմամբ (այդ նստին մէջ էր, որ համբ Տիգրանի մահան վճիռը արձակւեցաւ), քննութեան նեթարկեց և վերահասու եղաւ այն տպագիր ստուգարաններուն (document) և մանրամասն տեղեկագրերուն, ներկայացւած էին նախկին յեղափոխականի մը, դաւաձան Մկրտիչ Թիւթիւնցիւլի կեանքի և վերջին երեք տարիներու հանրածանօթ գործունէութեան մասին:

Ուստի, ի նկատ առնելով, որ վիրաբոյժ Մկրտիչ Թիւթիւնցիւլի ոչ միայն դասալիք մը եղած է յեղափոխական բանակէն, այլ և կարեոր գաղտնիքներ երեւան հանած և իր նախկին յեղափոխական ընկերները մատնած է, և թուրք ոստիկանութեան ձեռքը հզօր ու անարդ գործիք մը եղած է հայ յեղափոխականի անունն աղարտող:

Կ ե գ ը ո ն ա կ ա ն Կ օ մ ի տ է ն մ ի ա ձ ա յ ն մ ա հ ւ ա շ ա ն գ ա տ ա պ ա ր տ ե ց դ ա ւ ա ձ ա ն Մ կ ր տ ի չ Թ ի ւ թ ի ւ ն ձ ի է վ ը,

Վճուին գործադրութիւնը յանձնելով Զոհ Կօմիտէին հաշարեկիչներու գնդին:

—Յունիս 11(ս. ա. 23), կիրակի երեկոյեան ժամը 9-ին Թիւթիւնցիւլի գիշերհագուռտով նստած էր իր տան առջև (Կէտիկ փաշայի թաղ) և կը խօսակցէր իր տնեցիներուն և դրացիներուն հետ, որոնք խոնած էին փողոցին մէջ քիչ մը մաքուր օգ ծծելու և զբուխու համար: Յանկարծ երկու աշարեկիչներ, ջրհանկիրի հագուստով ծպտած, որոնք երկար ժամանակէ ի վեր կը հետապնդէին Թիւթիւնցիւլի, կանգ կառնեն դաւաձանին դիմաց, և անսնցմէ մէկը պազարիւնով իր ատրանակը քաշելով կարձակէ անոր վրան: Վերջինս ցափ ճիշով աջ կողմին վրան կիյնայ, մինչ անտին փողոցին մէջ գտնուող մարդիկ փախչող փախչողին կը լան:

‘Նոյն միջոցին զափթիէ մը և ոստիկան մը, որոնք պատահմամբ կը գտնուէին մէկը փողոցին վերին և միւսը ներքին ծայրը, կծիկը կը դնեն, երբ ատրանակի ձայնը կը լսեն:

Երկորդ աշարեկիչը այդ միջոցին կարձակէր իր ատրանակին ալ և երկուքը միասին կը սկսին հեռանալ, իրենց գործն աւարտած համարելով:

Կէտեկ փաշայի ոստիկանութեան պահակը շատ մօտ է վճուին գործադրութեան վայրին, սակայն ոստիկանները, երբ Թիւթիւնցիւլի զարնւելուն լուրն առին, ոչ միայն չփութացին օգնութեան հասնելու, այլ մինչև անդամ քիչ մը ուշացան գիտմամբ, աշարեկիչներուն հետ դէմ դէմ չփութեան համար:

Դաւաձանը զարնող քաջերն արդէն բաւական յեւացած էին, երբ ոստիկանները՝ միանալով գիշերապահ-

ներու և փողոցի մէջ պատահած մարդերու, սիրու ըրին վերջապէս անոնց հետքով երթալու:

Աշարեկիչները „Թաւուգ-պազար“-էն անցան ո՛Մահմատու-փաշա“ և արդէն հասած էին „Մարբութեան ները“, երբ հալածողներու խումբը, որ գլորւող ձիւնի գնդակի պէս, հետզհետէ ստուրացած էր, աւելի ու աւելի կը մօտենայ ահաբեկիչներուն: Բազմաթիւ ոստիկաններ և գիշերապահներ, բազմութենէ քաջալերւած, կը ջոկին հալածող խմբէն, և հայշանքներով կը դիմեն ահարեկիչներու վրայ, ալ վերջապէս ձերբակալելու յուսով: Վճռական վայրկեանը հասած էր, „Մարբութիւններէն“ անդին իրենց դրութիւնն աւելի պիտի գժւարանար և ահա երկու քաջերը յանդուզն փորձ մը փորձեցին. ետ դարձան և „Սապոնձի“ խանին փողոցին մէջ կրակ տւին հալածողներուն վրան: Փորձը սքանչելի արդիւնք ունեցաւ, տռաջին գնդակն արդէն բաւեց ցիրուցան ընել այդ վախկոտ խլեզներու խումբը:

Երկու վայրկեան ետքը փողոցը պարպւած էր և երկու ահարեկիչները „Հասիրճիլարի“ կողմէն հանդարտ ու անվախ իրենց ձամբան շարունակեցին:

Թիւթիւնցիւլ ծանրապէս վիրաբուած էր. գնդակներէն մէկ մխած էր ստորին որովայնի մէջ, ուրիշ անհարին եղաւ հանել, իսկ մխածը ազդը ծակած անցած էր:

Վճուին գործադրութեան գիշերն իսկ ոստիկանութեան նախարարի օդնական Հիւսի պեյր անձամբ եկաւ հարցաքննելու վիրաբուալը. իսկ նազըմ փաշանորապէս յուզւած իր հաւատարիմ ու կարող պաշտօնեային գլուխն եկած գժբախտութեան վրայ, ծանօթ վիրաբոյժ Գամպուր օղուն խրկեց վիրաբուալը դարմանելու և մահւան ճանկէն պատելու:

Ոստիկանութեան համար անգնահատելի ստացում մըն էր այդ դաւաձանը, և զարմանալի չէ, որ անոր զարնելիը երկու յեղափոխականի ձեռքով մեծ յուզում առաջ բերաւ բոլոր շրջանակներուն մէջ և անմիջապէս հեռագրելեցաւ եւրոպական թերթերուն:

Սօֆիայի վրայով մըր լրկած հեռագրին մէջ ըսւած էր թէ մահամերձ է Թիւթիւնցիւլի և իրաք երկու շաբաթ շարացար տանշւել և մահւան դէմ մաքառել է ետքը, վերջապէս սատկեցաւ յունիս 27-ին:

Սուլթանը սաստիկ կատաղած Թիւթիւնցիւլի անձին դէմ կատարւած այս փորձին, որ երբորդն էր իր տեսակին մէջ (Արտաշէս, Համբի Տիգրան), քանի մը ամիսներու միջոցին, խիստ հրամաններ տւաւ նազըմ փաշային վճուին գործադրիչներն որոնելու և պատժելու: Անթիւ ձերբակալութիւններ ամեն թաղերու մէջ:

Ոստիկանութիւնը բան մը ըրած ըլլալու համար ձերբակալեց խեղճ ջօհանկիր մը, որ ո՞չ Թիւթիւնցիւլի կրցաւ ճանչնելու և ո՞չ այն գիսեպանը, որուն խանութիւն մէջ վճուին գործադրութեան նախընթաց գիշերը երկու ահարեկիչները երեցած էին: Բայց ոստիկանութեան համար պատուի խնդիր մըն էր ձերբակալել գոնէ անոնցմէ մէկը, և ահա այլ և սպառնալիքներով ստորագրել տւին գիսեպանին թուղթ մը,

որով ինքը կը պայէր թէ ձերբակալւած ջրհանկիրը երկու աշաբէկիչներէն մէկն էր: Այդ խայտառակ գործըն անամօթաբար պաշտօնապէս ծանուցեցաւ, թէեւ առաջուց գիտէին թէ ոչ ոք պիտի հաւատար:

Ջրհանկիրի հագուստով ծպտած երկու աշաբէկիչներն ալ ապահով ու ազատ են իրենց նախկին տարագին մէջ:

Կ. ՊԱԼՍԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԵ

ԵԲԵՔ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԵՐ

(ՆԱՄԱԿ ԿԱՐԻՆԻՑ)

Հազար ու մի տեսակ մտածմունքներով. շրջապատած, հոգիս ալեկոծ, թողնում եմ երգումը, հինաւուրց բազմայիշատակ քաղաքը, իւր մասիղապատ տեսքով ձանձախարիթ աներով, շտապում եմ հեռանալ, ազատւել երեակայութիւնս կաշկանդող այդ մժնուրատից, յուսալով, որ լեռնային ազատաշունչ սղոխը իւր հովհատ թէերով շյելով ճակատս, պահ մի պիտի ցրէ սրտիս դառն կսկիծը:

Կը յառաջանամ Դէւեսոյի լերանցամիջով. եւրոպացի հիւպատուններու խուբը կառքերով ու նժոյգներով, փափկասուն տիկնանց ու գեղանազ օրիորդներու հետ միասին կը շըջադային ծաղկաւէտ լերանց վերայ, վյշելելով անմահ օդն ու ջուրը, որից զրկած են երկրի բնիկները, հարազատ որդիները... Դաղսնի լրտեսներ կը շըջապատին նոցա. Հազիւ կարելի է գաղտագողի ակնարկներ փոխանակելով, բարեւ տալ և հեռանալ: Նոցա կառախումբը արդէն հասել է նէրիչայ կոչւած կայարանը, երբ մի հայ երիտասարդ, գունաթափ և գողդոջ մտեցաւ ու հատկեալ հագագներով իմաց տւաւ, թէ մերձակայ ձորում սպանւած երեք մարդոց դիակներ կան, և թէ այնտեղ զինորներ կը շըրջին: Ոչ ոք կը հաւատայ:

»Միթէ կարելի է, ասում էր դր. Գրոսման, որ ամենաբանուկ ձանապարհի վըայ, երզըութից հազիւ մի ժամ հեռի, արբունի ձմերանոցին այսքան մօտ միաժամանակ երեք սպանութեան դէպքեր կատարւին: Ամենափքը ձայն մի և ահա պահապան զինորները օգնութեան կը փութան. այդ անհնարին է, անհաւատալի է, դա հայոց չափազանցութիւններից է:: Ի՞նչ անէր նա, յանցանք չունէր, չէր գիտէր, որ ինչ որ Սև ծովի այն կողմ անհաւատալի կը թւի, այս կողմ, Անատոլիի մէջ սովորական դէպք է սոսկ. նա զարմանում էր և իրաւունք ունէր զարմանալու, թէ ինչպէս կարելի է, որ խաղաղութիւնը ապահովելու համար նշանակւած զինորները օգնութեան չեն փութար, չգիտնալով, որ դքքա իսկ են ամենից պժգալի ոճրագործները: Ապրած Եւրոպայում, նա չէր կարող հաւատալ թէ իսկապէս հայերը անամօթ կառավարութեան դըրդմամբ՝ մահմեդական լիրը ֆանատիկուններու ձեռամբ տանջում են, զրկած մարդկային արժանապատւութիւնից, ամենայն իրաւունքից. նա կարծում էր, թէ

ինչ որ հայ և եւրոպական մամուլը կը հրատարակեն, լոկ հայերի չափազանցութիւնն է. ինչպէս կարելի է, որ յաչս քաղաքակիրթ աշխարհի օրինական ձանչւած մի պետութիւն գործէ կամ թոյլ տայ գործել այդպիսի անլուր խժգժութիւններ իւր հաւատարիմ հպատակներու նկատմամբ:

Երիտասարդի ստիպողական թախանձանքի վերայ այն կողմ դիմեցին անգիտական հիւպատոս Միստր Գրէյվս, իտալական հիւպատոս Մօնակօ, „Դէյլի նիւզի“ թըլ թակից Մ. Ակուտամօր և ուրիշ շատեր, նոցա հետ և գաղտնի սոսիկաններ՝ Ալի Խարի, Մուրատ: Հետաքրքրութիւննից մղւած կը դիմեմ այն կողմ:

Կառքերու և ձիերու արոփիւնը լաելով, մի քանի թուրք զինորներ, սկսան յափսիրերս բարձրանալ լերան կողերով ու անյայտացան ձմերանոցում:

Երիտասարդ հայը հուն ի հու հասնելով, ցոյց տւեց դիակը, բայց զարմացաւ, երբ մօտենալով երեքի փոխանակ միայն մի հատ տեսաւ: Բայց կէս ժամ առաջ ես այստեղ տեսայ երեք դիակներ և միայն զինորներ կային այստեղ, կաղաղակէր նա խելալեղ: Եւրոպացիք խնդրեցին տիկիններուն, որ հեռանան, զի մի գուցէ վերաւորւն նոցա փափուկ զգացումները... .

Սպանւածը ունէր տարօնցու զգեստներ, կարմիր գունաւոր լայն շապը, մազոտ ապա, թօսիա գոտի, կարմիր գեղջկական գուլպաններ և արեխներ: Եւր քովը ընկած էր մի դատարկ պայուսակ. հաւանականօրէն, սպանչը կողմից դատարկւած: Երեխ, թշւառ զոհը երկար դիմադրել էր, որովհետեւ դաշոյնի երկու խոր վերքեր կային ստամոքսի վերայ, ձախ արմունկը բոլորովին ջախախւած էր, ամբողջ մարմնը կապուտ պալարներով ծածկւած, քիթը կտրւած; աչքերը փորւած, կզակը ջարդած, գլուխը մաշկազերծ, պարանոցը կիսովին կտրւած: Երեք ուրոյն դիակներու արեան հետքեր կային, կայլակները շաղ եկած ծաղիկներու վերայ: .


Դր. Գրոսման լուց և գլուխը տարուգերելով ովերջացել է, ասեց: Այն ժամանակ անգիտական կոնսուլատի թուրք կաւազը մօտենալով, յարեց „Բէգեր, այսպէս շարունակ կամբաստանէք մեզ, թէ չարագործները խլամիներն են. ահա հայերու գազանութեան պարզ պացոյց, հնար է միթէ մահմեդականի մը իւր դաւանակից նկատմամբ այսպիսի վայրագ՝ գործ կատարէ:: Բայց արդեօք մահմեդական է, հարցուց Ակուտամօր: Անշուշտ, պատասխաննեց նոյն կաւազը չէք տեսներ զգեստները:

—Այն, ընդմիջեց հայը բայց ինսուսի հայն էլ այդպիսի զգեստներ ունի. հայը միւսիւլմանէն որոշող նըշան կայ. նայեցէք, թլիկատած է թէ ոչ: — Բժիշկը նայեցաւ. հայ էր: Երիտասարդը յուզւած կը խօսէր. «Հրաման տւէք և ես զօրանոցներու միջէն հանեմ միւս երկու դիակները»: — Այդքանն էլ բաւական է, ընդմիջեց Գրէյվս: հեռանանք. հիմա կը հասկնանք ամեն բան: Իսկ թուրքերը կը պնդէին, թէ դա բուքէ խեղդւած մէ, գազաններն են յօշուել... այսքան էլ լիրը: Բոլորի աչքերից բարկութեան կայծեր կը թափէն. ոմանք յուսահատ կը շարժին գլուխները, ոմանք բարձ-

րածայն կը բողզքին բռնութեան դէմ և ձայները ա-
զատ քամու թէւերու վրայ կը սաւառնէին հեռի և
հեռի... անմարդի լեռներում:

Վերջին անգամ տխուր ակնարկ մի ձգեցի այն կող-
մը, ուր երեք թշւառ զո՞չեր ո՞ գիտէ ինչպիսի անագո-
րոյն չարչարանքներով վերջ էին դրել իրենց արդէն
թշւառ և բազմաչարչար կեանքին, և խոր հառաչ մի
արձակեցի... .

Այնտեղ տեսայ և մի օտարական, որ գրիշը ի ձե-
ռին կը ճգնէր մանրամասն նկարագրել սպանւածը իւր
յարակից առարկաներով: — Դա „Դէյլի նիզի“ անձ-
նանւէր թղթակիցն էր:



ՆԱՄԱԿ ՏԱՐՕՆԻՑ

Ապրիլ 22-ին եւրոպացի դէլէգատները և թուրք կօմիսէօնը բարձրացան Ծատախ՝ տեսնելու Ըէնիկ, Սէ-
յալ և Գէլի-Գուղան. ի հարկէ, բոլոր տները այրւած,
մի քանի նորաշէն խղիկներում տեսան մի քանի ազա-
տեալ հայեր, որոնք ներկայանալով, ցոյց տւին այր-
ւած եկեղեցին, աները և շէնքերը. ապա նրանց ա-
ռաջնորդեցին Գէլի-Գուղան, համբաւաւոր և աշխար-
հահոչակ փոսերի մօտ, ուր գնդապետ Թէւֆնիդ բէդի
հրամանով տէր Յովհաննէսի առաջնորդութեամբ այն-
տեղ անձնատուր բոլոր սասունցիք կոտորւեցան անխը-
նայ: Այնտեղ էր և գնդապետ Թէւֆնիդ բէդը Գէլի-
Գուղանի հերոսը, մուայլ դալուկը պատել էր նորա
դէմքը: Խոսքու և ծանր նայւածքով, լուռ և մունջ
դիտեցին, թէ ինչպիս քաջ սասունցիք կը պեղէին փո-
սը. ահա սկսան մարմինները յօշ յօշ երևան գալ,
ժանտահոտութիւնը ծաւալեց ամեն տեղ, այնպէս որ
Քնիչները ստիպւեցան ուղարկել Մուշ ապանեխական
դեղեր բերելու համար: Նոյն ժամանակ իրենք մուան
Գէլիի աւերակները, ուր մէկ կին, անսւաղ ու մերկ,
մերձնալով անոնց, արտասւաթոր աչքերով ցոյց տւեց
ու Գէլորդ եկեղեցին, այրւած և քանդւած. „Այստեղ, ա-
զաղակցեց նա, ես սուրբ ժամի մէջ, վաթսոն կիմի ու
ձահել աղջիկ պղծեցին ու մորթեցին, ես ել հոն էի.
մեր անարգեալ պատւոյ համար հայիփ (վրէժ) կը
պահանջեմք“: Երբ ապանեխական դեղերն եկան, այն
ժամանակ բացին ուս Պետօյի տան մօտ գտանող մեծ
փոսը, գտան տէր Յովհաննէսի մաշկազերծ մարմինը,
ականողիք փորած և մէկ կապ զզին, ձիշտ ախնպէս,
ինչպէս նկարագրել էին սասունցիք. ապա դիակներու-
կոյտեր, մանր և մեծ, ծեր և երեխայ, այր և կին խա-
ռըն լեցւած: Սարսափահար եւրոպացիք տեսան այս ու
էլ չկարողանալով դիմանալ, հրաման տւին, որ իսկոյն
գոցւին փոսերը բաւական համարեցին քննութիւնը,
չուզեցին գնալ այլ ևս Տալորիկ ու վերադարձան ո.
Յովհաննէս, իսկ թուրքերն ի Մուշ:

Մահմետական տարրը իւր անգուստ կատարութեան
մէջ, անհամբեր սպասում է նոցա գնալուն, որպէս զի
նորանոր Սասնոյ կոտորածներ յարուցանէ. վրէժինդիր

ոգով լեցւած՝ կը սպառնան չխնայել և ո՛չ մէկ ան-
հաւատ գեաւուրի. և ոքրիստոնեայ“, ոմարդասէր“,
ոքաղաքակիրթ“ եւրոպան լուսւմ է այս ամենը ու
հանդուրժում... .

Մինչ ցեղը:



ԲԱՐԵՆՈՐՈԴՄԱՆՑ ՆՇԱՆՆԵՐ

Բարիքները հիմակու սկսանք վայելել կը խնդրենք
ոմարդասէր“ դիւանագէտներէն, որ մեզ ապահով հա-
ցէ մը ցոյց տան՝ զգացած երախտագիտութեան հա-
ւաստինիս մատուցանելու համար:

Չնորհաբաշխ սուլթանի կառավարութիւնը ծով գան-
ձարանը լեցնելու և սոված պաշտօնեաները մի քիչ կե-
րակրելու եռանդով՝ ինքն իրմէն դուրս ելած, ալ սկը-
սած է իր ոյժերը կեդրանացնելու տուրքերու հաւաք-
ման. ամեն օր իրար ետևէ Պոլաէն խիստ հրահանգներ
կուգան՝ հին և նոր տուրքերը գանձելու համար: Ա-
ռաւաւ կանուխ ելնողը հոչակաւոր մեթոդներ կստեղ-
ծէ այդ հրահանգները գործադրելու համար. վերջա-
պէս միաձայնութեամբ ամենէն նախադաս կը համար-
վի աս մեթոդը, որ իր գիւրութեամբ սքանչելի ար-
դիւնքներ տալու վրայ է. ահաւասիկ —

Քիչ շատ ունեռոնեցուն օձիքէն բռնել, մէկ տար-
ւան տուրքը մէկ վճարով առնել՝ առանց խօսեցնելու,
հիանալի փութացանութեամբ կը գործադրեի. իսկ ան-
կարոշներն ալ շխտակ բանտ: Վճարողները մէկ կողմէն
կարձակւին, միւս կողմէն ուրիշներ իրար ետևէ բանտ
կը լեցւին. վերջապէս 50 հայի դրամագլուխ շարու-
նակ կայ բանտը՝ տուրքի փոխարէն: Խեղճ մարդիկը որ-
շափ կաղազէն, օգուտ չըներ. վերջապէս լսելով, որ օ-
րինաց համեմատ կառավարութիւնը զիրենք 91 օր բան-
տարկելէ յետոյ, տան կահ կարասիները ծախելով պի-
տի գանձէ իր դրամը: Խեղճները խնդրագրով դիմեցին
վալի փաշային և խնդրեցին, որ զիրենք արձակէ՝ ըսե-
լով ոմնիք անկարող էնք այդ ստակը վճարել, մենք
անօթի, զաւակներնիս սովատանջ, հազար տարի ալ կե-
նանք այս գժուիքին մէջ, նոյնը պիտի ըլլայ. սուլթանի
սիրոյն համար հիմակւանէ դիմեցէք մեր տուները կահ,
կարասի, իրեղեններէն ինչ որ գտնէք, ծախեցէք, ծեր
դրամը առէք, միայն թէ թողէք մեզ, որ աշխատինք՝
մեր ընտանեաց գէթ չոր հաց մը ճարելու. իսկ եթէ
աղքատ ըլլանուս համար օրինաց առջև յանցաւոր կը
համարւինք, այն ատեն տէք մեր օրապահիկը“:

Խնդրագիրը մայիս 3-ին տէին, այսօր երեք օր է,
պատասխան չէ տրւած:

Կրակէն փախչիլ ծովը իյնալն արգելած է մեզ, շը-
նորհիւ շնորհաբաշխ սուլթանի:

Գիւղացիներուն ևս խիստ նեղութեան և տանջանք
կուտան տուրքերը կանոնաւոր ապէս գանձելու հա-
մար. անասուններու ախոռները ենդզ գիւղացիներու
բնակարան դարձան. վայ անոր, որ տուրքին վճարումը
կուշացնէ. վայ անոր, որ անբարոյական զապթիէներու

քմահաճոյքը չի գոհացնէր. վայ անոր, որ փորձութիւն կունենայ անիրաւ գանձումներու, անհամար զեղծումներու և հարստահարութեանց դէմ բերան բանալու, — հացանի կոթերը իսկոյն կարկուտի պէս կիջնեն, և ձեռքը կապկաելով, ախոռոյն սիւնին կը կապեն. լիրը յիշոցներու հետ թուք ու մուրը անպակաս կը լսայ այ մինչեւ որ գոհացում չի տրւի...»

Արտերն անմշակ ու ցանւածներն անինամ մնացին. յուսահատութիւնը մեծ է, գոյութիւնները անհամար:

Գիւղացիները հոգինին բերանին եկած մի քանի անգամ ինդրագիր տւին վալի փաշային. առաջնորդն ալ՝ ծանուցագրով մը բողոքելով եղած զեղծմանց դէմ, դատ պահանջեց յանցաւոր պաշտօնեաներու դէմ։ Բայց ինչ օգուտ. մինչեւ որ առաջնորդը ինքը յանձնառու չեղաւ գիւղացւոց պարտերու մի մասը 8 օրէն վճարելու չըթողին խեղճ հարստահարեալներն։ Ուժ օր յետոյ կառավարութիւնը փառաւորապէս գանձեց 2700 դրուշ առաջնորդէն, թէև դատի կանչւելիք ոստիկանները ազատ համարձակ յառաջ կը տանեն իրենց շահատակութիւնները։

Առևտրական գործերը կանգ առեր են, քաղաք և թէ գիւղ ծանր տագնապի մէջ են, կառավարութեան բարբարոսութիւնները օրէ օր կաւելնան. թուրք խուժանի թշնամութիւնը սաստկացած է, բանտերը անմեղ հայերով լեցւած են. որո՞ւ դիմենք, մորկէ օգնութիւն ինդրմնք։

Բայց ալ ամեն բան իր չափն ունի, մեր համբերութիւնը ալ հատաւ, դանակը վզին եկած է, ժողովուրդը վերաւորւած է. հերիք, մեր գլխին հետ, կաշին հետ նաղացին. հերիք, մեր արդար իրաւունքին և հաղարաւորներու արեան իրաւունքին վայ կատարերգութիւններ կատարեցին և կը կատարեն սուլթանի հետ միացած այդ „մարդասէր դիւանագէտ“ կոչւած շահասէր գաղանները. թող հազարաւոր անմեղ զոհերու անէծքը թափի անոնց գլխուն, թող հազարաւոր անմեղ մանկանց, աղջկանց, կանանց թափած արիւնները խեղդեն նոցա. ալ չենք խաբէիր դիմակներէ, խաբէկաններէ, բարենորդումները ըստած ծակ կարկտաններէ։

Սուրը պատեանէ ելած է, տեսնանք որո՞ւ գլուխը կիյայ:



ՆԱՄԱԿ ՊՐՈՒՍԱՅԻՑ

Բանտարկութիւն։ Բողոքական գրավաճառ մը գիրք ծախելու համար Պիլէճիկ կերթայ. Պիլէճիկի կոմսէրը ողեմիօր մըսըն քի ինձի պաթաւ օլան արթը սաթը ըմայածադ. գուրան սաթը լաճակ. կրսէ. նոյնպէս նաև մութեսարիֆը գլխուն անլուր անէծքներ կը թափէ և երկու օր բանտարկելէն վերջ ողիրը ծախելուն համար ընդ հսկողութեան զրուսա կը դրկեն. քանի մը օր հոս բանտարկած մնալէն վերջ միսիոնարներու միջամտութիւնով արձակեցաւ. Ազատւելէն վերջ այս գրավաճառ գիրք ծախելու համար գնաց

Եէնիճէ գիւղ բայց հոն ալ ձերբակալւեցաւ և բանտարկելով իյնէ-կէօլ անկից դարձեալ Պրուսա բերւեցաւ, ուր վերստին միսիոնարները ազատեցին զինքը.

Եօղլատցի Խսկէնտեր Շիշմանեան անուն հայ մ' ալ բանտարկեցին եօղլատցի լինելուն համար, 22 օր հաղորդակցութենէ արգելեալ վիճակի մէջ պահելով թէ զինքը, թէ կինը և թէ 10 տարեկան աղջիկը. Խրկար բարակ հարցաքննեցին, թէև ոչինչ գտան, բայց իբր մեծ յեղափոխական ղրկեցին Պոլիս, հոն ալ 35 օր հաղորդակցութենէ զուրկ հարցաքննեցին զինքը, իհարկէ ծեծով հայհոյակով բայց դարձեալ ոչինչ յանցանք ը գտնելով գտապարտեցին. սակայն եւրոպական դեսպաններու միջամտութիւնով արձակեցաւ։

Իբր թէ ազգային երգեր երգած լինին. Պիլէճիկի շրջակայ հայ գիւղերէն վարժապետ և հարուսաներէն 8 անձինք Պիլէճիկի բանտարին մէջ կը հեծին։

Սուլթանի կառավարութիւնը որուն համար ամեն միջոց սուրբ է, հայը անւանարկելու և չարչարելու, գաւառներու մէջ պատահած հրդեշներն վերագրած էր հայ յեղափոխականներու գործ. այս սկզբունքով վերջեր, Պրուսայի մէջ պատահած հրդեշի մը համար բանտարկեց իբր Հոճիք Քէօթահեացի հայ արհեստաւոր մըր սակայն առանց որևէ ապացոյցի. Բանտարենեց նաև խարբերդցի կարապետ անուն կաթնավաճառ մը իրեն ուղղեալ նամակի մը առթիւ, որոյ բովանդակութիւնն էր՝ „Աչքդ լոյս վեց քաղաքները ազատւեցան“։ Յիշեալ նամակին կեղծ և շինծու լինելը ակներե էր, որովհետեւ առանց դրոշմաթուղթի, առանց կնիքի սուրհանդակի տուփին մէջ բաց գտնւած է։

Իբր վերջին նորութիւն. — կառավարութիւնը որպէս թէ ապահովելու համար հայ գիւղացիին կեանքը, պատիւը և գոյքը, կուսակալութեան մէջ ինչ որ տաճիկ, քուրդ, չըրքէզ աւազակներ, մարդասպաններ կային, ժողովեց և գիշերապահ անւան տակ ցրւեց հայ գիւղերու մէջ՝ պաշտօնանկ ընելով հայ գիշերապահները. ալ ապահովութիւն, ալ հանգստութեան բեկալերը սկսան կրկնւիլ բազմապատկիլ. գիշեր մը այդ գիշերապահները Մեծնորդիշի հայոց եկեղեցիին դուռը աղտոտած են և ցերեկ ատեն ալ Պայրամի տօնին եկեղեցին գնդակակնքած։

Երկու տարիի չափ առաջ, երբ Բագար գիւղ գայմագամութիւն հաստատելու ձայներ կային, սկսան շրջակայ գիւղերու հայերը աշխատել, որ չյաջողի ատ. — Հեռու, մղններով հեռու թող լինի մեզմէ սուլթանի կառավարութիւնը, կը գոչէին անոնք, որչափ հեռւեն հսկէ մեզի, անչափ լաւ է վալի մը, գայմագամը, միւտիր մը իրենց արբանեակներով մըր արբենը ծծող տղրուկներ են. որչափ հեռու ապրինք անոնցմէ, անչափ ալ հանգիստ կը մնանք։

Որչափ իրաւունք ունէին անոնք։



ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԴԵՐՁԱՆԻ

V

Խէլիլ աղայի մասին արդէն թէեւ գրեցինք, բայց աւելոր չենք համարիլ տալ քանի մը լրացոցիչ տեղեկութիւններ եւս, իրը Պալապանի էշիրէթներուն գլխաւորը։ Մա արդէն լինելով ասպատամբ, ամենէն աւելի կը վասէ, կը կեղեքէ երջանի արեւմտեան կողմերի հայ բնակիչները Պալապանի ժողովրդոց վրայ իր պազեցութիւնը խիստ շատ է արդէն, մանաւանդ 8-10 տարի առաջ Խնձորեկի մէջ կատարած մարդապանութիւնները, աւերումները երբ անպատճի մնացին, ալ աւելի սարսափեցուցիչ եղաւ Խէլիլ անունը։ Անսամօթ սուլթանի կառավարութիւնը այս քանի տարւանս մէջ քանից կայսերական ներում շընորհեց, բայց Խէլիլ այդ ներումը չընդունեց երբէք իրը շընորհը եւ շարունակեց իր ընթացքը կամ թէ ալ աւելի անդիմութեակի սկսեց առաջ տանել իր աւերումները։

Եթերից Հիւսէին աղա հ-5 տարիէ ի վեր հաստատած է Թւնիկու մէջ եւ արդէն բաւական հող ալ յափշտակած է իր տղան եւ եղայրները ըմբուտ են եւ արունկզակ յերւուզամները, ասոնց գործած աւերումներն ու տամօ վասաներն ալ շատ ու շատ են, բայց որովհետեւ երկարեցաւ մեր տեղեկագիրը, չեմ ուզեր մանրամասնութեանց մէջ մնանել։

Հոչակաւոր Շահ Հիւսէին պէկի որդի Հայդար պէկի՝ շրբաւականանալով հօրը թողուցած անթիւ հարստութիւննէն, ինքն ալ այսօր հետամուտ եղած է աղքատ գերջանցիները պոպկելու։ ամէն աշուն մօտ 50 զինեալ յելուզակներով եւ կառավարութեան պաշտօնեաներով՝ 4 ամսի չափ կը քանդէ ու կաւերէ ամբողջ երկիրը, ամենախարդախ միջոցներով գործ կը բանայ խեղճ զիւղացիների հետ. ո եւ է զիւղացի մը, երբ ո եւ է հաշւով բռնւի Հայդարին հետ, վայ է եկեր ոչ միայն այդ գործ ընողին, այլ ամբողջ զիւղացոց զիւղուն։

Թւնիկի մօտը՝ Պուլմիշ զիւղի հողերը Շահ Հիւսէին հայրը ժամանակաւ զրաւած, յափշտակած է պալապանցիներէն 1892 թ., աշունը 7 տուն թւնիկցիներ իրը մարապա կը տանի իր այդ Պուլմիշի հողին վրայ, փտած ցորեններ կրուտայ աշունը ցանելու համար Գարուն կը լլայ՝ բան չէ բուսած, գարնանացան ընելու ալ պալապանցիք չեն թողուր, կին, աղայ կը լեց.ին արօններուն առնչեւք. վերջապէս այդ ամառը ձեռնունայն կը մնան թւնիկցիք, մէկ երկուուր նորէն կը գանանան զիւղ. միւսներն ալ անօթի ու ծարաւ լքաներով իրենց ընտանիքը, կը պանդիմուն Պօլխա 1893 թ. աշունը Հայդար պէկ 50 յելուզակներով, մէջիսի իրարէի է չանեներով ու թափու քեաթիպիով կիշնէ թւնիկ, ամենայն լրառթեամբ իր բոլոր մարդոցը համար ալ կը պահանջէ գաոփ եւ ոչխարի խորոված կուտեն կուշտու կուռ, կը յագեննան, կը կանչն զիւղապետն ու յայտնի անձնաւորութիւնները՝ (ձեր զիւղին 200 լինայ կը պահանջեմ), կըսէ, (հիմայ փողերս). շատ պաղանաք, շատ պաղատանք, մենք քու հետպ հաշիւ չունենք, կըսեն, քեզի մարապաւթիւն ընողները այս ինչերն են եւ անոնք ալ հոս չեն, անոնց հետ ինչ կուզեն ըրէ։ Հայդար հայուութիւններով կը նախատէ եւ կը հրամայէ ծեծեւ իր դէմը խօսելու համարձակողները եւ կը պահանջէ, որ եթէ դրամ չունիք, հող աւելք, ո՞վ տայ, ո՞վ է պարտական։ Թողունք միւս գիւղացիները, այն 6-7 տունն ալ ինչու պարտական ըլլան Հայդարին։ սերմը չէ բուսներ, արտերը պարապ են մնացեր, մի՞թէ հայերը կընային փտածք բուսցներ տալ կամ պարտաւոր է՞լն կուելու պալապանցոց հետ կառավարու-

թեան պաշտօնեայ է գիւղիները ամենքն ալ կը ծանրան ու կը սպառնան զիւղացոց։ Վերջապէս մօտ 10 օր ու տեղ խմելէ վերջ, առանց պաշտօնական գործողութեան, մարապութիւն ընողների տներն ու հողերը իր թէ կը գըրաւէ։ Կուգայ 94 թ. աշունը. զիւղացիք կիմանան, թէ Հայդարը գարձեալ կուզայ մեծ բազմութեամբ։ Այս անդամ զիմում կընեն պաշտօնեաներուն եւ կըսեն եթէ Հայդարը գարձեալ իր մարդիկներով մասէ զիւղը. մենք պէտքէ գաղթական լինենք։ Մ է ծլիսի էջա կէօկէգիլլի Սլի պէկ կը պատասխանէ համգարտ կեցիք տեղերնիդ եւ գործոց ցէք Հայդար պէկը, եթէ ոչ ձեզ շատ գէշ կըլլայ. կոթերցի Պէրաբէրեանի տղոցը սպանեիլը չտեսաքք, դուք ինչ նահանակութիւն ունիք Հայդար պէկի համար կերջապէս վասանալիքներ, ծնծ, չարչարանք. կը յանողին ամենայն խժդութիւններ 200 լինայի մուրհակներ կորցել գիրախա թւնիկցիներէն։ ինչ պիտի ընեն, ո՞ւսկից պիտի տան։

Բայց ինչո՞վ մերաւոր է քիւրդ աղամ, մենք ինչո՞ւ կը ծանրանանք զարադէւրէնոցիի, կէ էնկազիի կամ մէկի, միւսի վրայ նոքա կուզեն հողատէր ըլլալ և մեծ հողատէր, եւ ինչո՞ւ չըլլալ՝ իրենց կողմն է քիրոգ ոյժը, իրենց կողմն է կառավարութիւնը։ Հայկը արդէն յուսահատած, չունին բարոյական բարձր իրէալ, չունին արիւթիւն միանալու եւ պաշտամնելու զիրենք ընդգէմ դաւաճանմին ու բռնաւորին։ Բայց ինչ կըսեմ. ինքնապաշտապանութեան գոների որք թւուղ նւազ չեն, արիւները կը բողոքեն. մենք ընաչենք կրնար մեղադիւ հայ զիւղացին, նոցա կեանքը մարտիրոսի կեանք է այս կողմների հայերուն համար ապրելը օրը հազար անգամ մեռներ, նահատակիլ ըսել է Անբա՛խս ժողովուրդ, այս չափ չարչարիլ ու տանչւիլ եւ ոչ մէկ տեղ տեսնաւած է։

Ալ կրնաք երեւակայել գերջանցիներու թշւառութիւնն ու խղութիւնը։

Դերջ

ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆ ՄԱԿԵԴՈՆԻԱՅՈՒՄ

Մեր ընկերոջ հաղորդածը.

— Յունիսի 9 (ն. տ. 21). Մի զինւած Հայդուգային խուրման սարի մօտ, կարպինի վանքից ոչ հեռու ընդհարում ունեցաւ սուլթանի զօրքի հնեա: Երկու օրւայ կուից յետոր Հայդուկներից սպանեցին 3 հոգի, 1-ը վիրաւորեցին, 4 հոգի գերի ընկան: Խոկ զօրքից սպանեցին 17 հոգի, վիրաւորւած են 6: Հայդուկային խմբի մնացած մասը նիկօլի առաջնորդութեամբ հերոսաբար շարունակում է կուիւր: Մի ուրիշ տեղական Հայդուկային խուրմ կօշանսկում բաժանելով երկու մասերի մի կիրճում բոլորովին ոչնչացրեց զինւորների մի ամբողջ խումբ (մօտ 150 հոգի): Երրորդ խումբը այրեց Խոսիվանեայ գիւղը:

— Յունիսի 11 (ն. տ. 23). Կոխուր ապստամբների և գորքի մէջ արդէն 5 օր է շարունակում է: Ամբողջ Սրբութեկէ կոչւած մասը (Պէինա և Կրիվա գետերի մէջ): շարժման մէջ է: Խմբեր գալիս են Պալանկայից, Կրատովոյից և Պրեշովոյից, նոքա զինւած են մարտինի հրացաններով:

— Նոյն օրը երեկոյեան ժամը 9-ին, Գերմանի մօտ կոխուր շարունակւեց մինչև կէս գիշերը: Այդ գիշերը

ապստամբները անցան երկրի խորքերը չնայած մի նոր զինւորական գնդի գալուն։ Սպանւած են շատ զինւորներ, այդ թվում և մէկ միլիազիմ։ Ապստամբականներից պահասում են 17 հոգի (փախած են թէ սպանւած, յայտնի չէ)։ Մնացած 47 հոգին կռւում են տաճկների և ալբանցոց դէմ։ Դրամական նպաստներ հաւաքւում են ամեն կողմից։

աջ ու ծախ, կապում ժողովուրդը յօգուտ սվեալ եղարք¹, „յօգուտ Էշմիածնայ”։ Բայց, երա, ոչ մի փոքրիկ օգնութիւն անգամ սպաման տանշողներին։ Եւ մինչ այստեղ՝ Յածկանայստանում մովի զո՞ս են զում ամրով ընտանիքներ, քննաբարում, հաւաքւում, - այստեղ մեր վեղարաւորները հանգիստ լողով, անամօթար վայելում են սպամական նվղութիւնը։

Ամիսիցներ, զո՞ս օրինակ վերցնէիք անգլիացիներից։

Լօգանի համալսարանի բօլգար ուսանողներից Մակեդոնիայի ապստամբութեան առթիւ ստացել ենք մի ոգերւած հրաւեր-ուղերձ, որտեղ նրանք ողջունելով հայ շեղափիսական շարժումը և յաջողութիւն ցանկանալով Հ. Յ. Դաշնակցութեան նպատակին շեցուով են երկու վիճակակից ժողովրդների միացած գործունեութեան վրայ։ Մենք կը տանը սրա թարգմանութիւնը առաջիկայ համարներից մէկում։

Բօլգարիայի Ս. քաղաքից տիկին Ակ. Թ. ուղարկել է իր նույն Հ. Յ. Դաշնակցութեան իր ձեռքով գործած մի գեղեցիկ դրոշակ, որի նկարների շուրջը կարդացում է „Մահ կամ Ազատութիւն” յեղափիսական դէկիզը։

ԱՄԾՈՒՅԹ

Նքը Սասունի քաջարի ապստամբութեան հետեւեցին այս սպասակելի, գաղանային կոտորածը նու ապս ամբողջ զաւափի աւերտից, այդ օրից հազարաւոր անմեղ զո՞նք՝ ստիպւած թուղթին փատավանիքը մէջ ընկղմած իրենց ծննդավայրը եւ մըրկ, բացաց ընկան Տարօնի և Հրդորում զաւանիքը՝ մի կորու հայ Տարօնի Դն կարող էին զանդենը ամստեղուուր սուլթանի տակուկու կարող էին ամսն ինչ Բայց եւ ամսէս թօւաւ հայաստացին սիրով բաժանեց իր վերաւորեալ տառապեալ եղածոր հնայ իր օրիայ պատառը։

Այժմ բագամաթիւ թշառութիւններ, ցաւերի վրայ անելանուուր է մի ուրիշ, որպէս ընկան հետեւանը Տածկանայաստանուուր տիկու իրերի ներկայ գրութեան, զա սովու է, որ սպանուուր է տանշած ժողովրդին կրկին։ Եւ կրկին զո՞նք տակ..

Դնչ է անում մի այսպիսի ժգնաժամում մեր հարուսա, աշխարհի բոյր բարիքները վայելող զավակարգը։

Մինչ արծանանանան անբանաւ միածնայն բոյրի շանիթեր է արծակում չայանանում տեղի ունեցող բարերութիւնների մէմ, մինչ նաև վրէծինը ութեան եւ զժութեան հրատէր է կարդում։ Յովանդակ քաղաքավրթեած աշխարհին, մինչ հազար մղոններով հնոու Անգլիայում յանձնաժողովներ են կազմում, զամական եւ այս տեսակ նէրաւութիւններ հաւաքում, որպէս զի օգնութեան ծոր կարկատին մի հարստահարսած ազգի ապարախան, քաղցից մինող զաւակներին, - այս ժամանակամիջնայն մեր հարուսաներն են յանձնաժողովներ են կազմում, սրանց եւն նէրաւութիւններ են անում եւ գումարում։ Եւ նէրաւում նէսչի համար, նէսչ նպատակով կարծում էր, որ ապստամբ ժողովով համար գերա պիտի զսե՞ն. ոչ սրանք հնոու նև, շատ հնոու մի այս տեսակ քաջագործ ծութիւնից կամ գուցէ անպատճան թափանութեան մասնաւմ սասոնցիներին նիւթապէս օգնենի։ Դարձեալ ոչ Այս գրամանները ուրիշ աւելի բարօ, վեեմ գործերի համար են ժողովում։ Փոխանակ իրենց թշառու մերէ, առվայր եւ արայիններին զո՞ս նիւթական օգնութիւն հասնելու, մեր հարուսաները տամական հազարներ են նիւթում։ Եւ ընդունում, ընդունում են մեր վեղարաւորները ազգից առաջարկած այդ մաս զումարները, հայցում, հաւաքում են

ՆԻՒՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Ապառաժից 500 բուրլի, Գ. Ի. 104 բուրլ., Կորաշէնից 100 բուրլ., Բ. Ի. 1300 բ., Միկին Խ. Ի. 100 բուրլ., Արամից 170 բ. 10 կ., Խ. ուս. Գ. Ի. 16 բ., Խրիսից (Հ. Ա.) 100 բուրլի։

“Արէժից” 5 ատրճանակ, 8 մեքենայ (գ. Փ.), 1 մեքենայ (գ. Բ.) և 1 մեքենայ (պ. Հ.), Աղեղից 50 պատրօնդաշաւ։

Արշակաւան քաղաքի կեդրոնական սնդուկի մէջ ստացեցցան։

Վ. Կայծակ 207 դաշեկան, Հ. Յ. Գ. Յ. 20 դաչ., Սա. 56 դչ., Մեղոիկ 40 դչ., Արտաշէս 60 դչ., Պիծակ 20 դչ., Արշակունեան 85 դչ., Մ. Գ. Վարդ 85 դչ., Գեղամ 20 դչ., Գիսաւոր 70 դչ., Հուր 50 դչ., Անընթեռնելի 40 դչ., Զրկէժ 40 դչ., Ընկերասէր 40 դչ., Պարութ 100 դչ., Թաթոս 30 դչ., Անձնէր 60 դչ., Քրդակուլ 60 դչ., Տաւրեան Գայլեր 50 դչ., Փոմորիկ 30 դչ., Սիրունի 20 դչ., Ն. Մէլիք 30 դաշեկան։

Վրիպակներ — Անցեալ Ն. ուում կրկին անգամ են տպագրւել՝ “Ճառագայթից 150 բ., Գետաշէնից 15 բ., Ապառաժից 1000 բ.” որոնք արդէն զետեղւած են եղել Ն. 6-դում։

Անցեալ համարում զետեղած Համբիդիէի և Կանոնաւոր զօրաց կիսարաժինների հրամանատարի փոխանորդի պաշտօնական գրութեան մէջ սպրդւել է մի խաչոր սիմակ փոխանակ ու հայդարանցի աշերէթի քրտերը տպագրւած է ու հայաստանցի և այլն։

Ի դէմ. տեղի խիստ սղութիւնը մեզ չէ ներում հակառակ մեր ցանկութեան, ուալ վերոյիշեալ պաշտօնական գրութեան մասին մեր խոստացած պարզաբանութիւնները ստիպւած էնք ինչպէս այս նոյնպէս և ուրիշ բաներ կամ թողնել կամ յետաձգել։

Այս համարին կցւած է Դժոկիքի նամակը, իբրև յաելւածի Սոյն նամակին միւս օրինակը հեղինակը ուղարկել է Հնչչակներ։

Դաշնակցութեան անծանօթներից նույրում է թղթակցութեան և նիւթատութեան համար ուկմեւ։

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիենա, Դաշնակցութեան ազատ տպարան

յ'ՕԿՆ 95 Մայիս 2.

Վաղուց անտի հայ յեղափոխական գործի մէջ նշմարելի էր անձնական կրից և եսական փառաց արդիւք եղող ահագին վեսաները, հայ հասարակութեան շահերին, նորա կենսական հարցերին: Ժողովրդի քաղաքական, տնտեսական և բարոյական հալածանաց ներկայ ժամանակ, փոխանակ այդ եւը կորչելու և անհետանլու յօդուա ժողովրդի, գնալով աւելի և աւելի հսկայական կերպարանք կստանայ, որով այն եղափացութեան կը յանդիմք, որ այդ արեան հեղեղում, ժողովրդի ներկայ օրհամի մէջ կուսակցական բաժանմունքը, անձնական կրքերէն բղնած կորութիւնը, եսական փառքը ժողովրդը կը տանի յաւիտենական կորստի գուրը... Մինչ ցարդ լուենուս պատճառը՝ միայն այն յօյն էր, որ այդ ձիւղերը իրենց փոքր դրութեան մէջ արմատախիլ պիտի լինին. դժբաղսաբար, այդ յօյսը ի գերւելնելով այսօր յարմար ժամանակը կը գտնեմ բացազրելու և հայ հասարակութեան առջև բաց անելու մի գըլ խաւոր կէտի մասին. մեր հայացքն ու զգացումները: Իբրև նմայշ վեր կառնեմ այն կէտն որ մի քանի ամիսներէ ի վեր հայ յեղափոխական կուսակցութեանց միջնի զուր վիճականութիւններ և զրպարտութիւններ յառաջացուցած է. մինչ ցարդ լուելուս պատճառը, նորին զգւանքս և ի սրտէ վիշտս էր, իսկ այսօր երբ այլ ևս ոտս կը գնեմ ժողովրդի ցաւոց մասնակից լինելու ուղի վերայ, խիզն կը հրաւիրէ ինձ այլ ևս արհամարհական լուսութիւնը ի բաց թողուլ և պաշտպանել բարոյական կէտ մը, որն արդէն լրջութեամբ խորհողի մը առջև պարզ և մէկին է...

Ես մօտէն գիտակից լինելով անմահանուն Պ. Սուրատի գործունեկութեան և մասնակից, ըստ կարեաց, նորա ձեանարկներին, մէք հարիւրաւոր փորձերով համոզուեցանք որ կուսակցական բաժանմունքը երբ այդ յառաջ կուտայ իրուն. հետեւանք քաղափարների արմատական տարրերութեան, երբ կուսակցութիւնը կը պայմանաւորուի մի ո և է հասարակական հարցի կամ երկողթի մասին, տարբեր աշխարհայեցողութիւնից, ժողովրդի խաղաղ ժամանակին, անբարոյականութիւնները՝ բարոյականութիւնից զառող ճշմարտութեան արտայայտիչ և ժողովրդի քայլերը յառաջ տանողն է, իսկ յեղափոխական գործի մէջ պատերազմի դաշտում, ժողովրդի ներկայ գրութեան և իրերի այս տագնապալից վիճակի մէջ մանաւանդ երբ չկ այ գաղափարի տարր երութիւնն է, երբ հիմնաքարը՝ երկու կողմից էլ մարդկանց նեղ եսի մէջ է կայանում, այդպիսի կուսակցութիւնները ժողովրդի հիմը քանդող ու տապալուն են. Այդպիսի կուսակցութիւններն են, որ զուգապատիւ են ժողովրդի մասին հասարական շահուց դաւաձանութեան. . .

Այսօր պ. Սուրատը, ժողովրդական այդ հերոսը, բանտի անկիւններ կը տքնի, բայց ես ազատ լինելուս համար, անհրաժեշտ պարտը կը զգամ. նորա լայն հարցները չը ծածկել ութ անկիւններում, բարսյականապէս չը մեռջնել նորա զգացումները, որ ժողովրդի իրաւանց պաշտպանութեան նուիրուած էր: Նա ժողովրդի ցաւերը իւր կաշի վրայ կը լավ դարձաւ ժողովրդի արդար շահուց արդար պաշտպան, նա իւր կեանքը նուիրեց ժողովրդի արդար դատին և ո՞չ այս կամ այն

կուսակցութեանց եսական փառքին... նոյնը և ամեն մի աղջիւ գործողի պարտականութեանց այր ու բենը պէտք է լինի: Ժողովրդի անմիջական շահն կը պահանջէր և միշտ կը պահանջէ, ընդհանր կը անուըւ ուժերի մի ացում: Խնչու... Որովհետեւ թշնամին (չծածկենք) ուժեղ է, համեմատաբար խիստ ուժեղ: Եւ այդ նպատակաւ էր, որ այդ յերոսը, թէ մասնաւոր անհամաների և թէ գաղափարակից ընկերների հետ միացած իւր ամեն ջանքն չէր խնայեր ձեռքեր այդ ցանկալի նպատակի իրագործումը: Թէ ինք Մուրատը և թէ ես դրդեալ այս և շատ մը երկար և արդար պատճոններից, մեք մեր թղթակցութիւնները կուղար կէ ինք երկու կուսակցութեանց ևս, մեղցանկալի էր, որ եթէ լինէր տանաւոր յեղափոխական թերթեր նոյն ծրագրով նոյն գործին նուիրուած բոլորի մէջն էլ նոյն թղթակցութիւնները հրատարակուած տեսնել ոչ թէ մեր եսական փառքի համար, այլ ժողովրդի անտանելի ցաւերը շատ թուով մարդկանց ականչին: Հասցնելու և գիտակից գարձնելու համար:

Թող այդ կուսակցութիւններէն ամեն մէկը իւր նոյն հարցանէ թէ արդեօք այդ կուսակցական բաժանմունքը չէր գլուազոր և բուն պատճառը: Սասնոյ մը աւերակաց տակ ծածկուելուն և անշուշտ այդ անձնական կրից և կուսակցութեանց այսպիսի վանդաւոր հետեանինները մեզ դիմել կուտար և պիտի տայ, որ ու բեմն գուք, կուսակցութիւններդ անխղճաբար ժողովրդի ոչխարի պէս մորթուելուն և նորա անարատ արեան հեղեղի պէս թափուելուն վրայ հանդիսաւես լինելով՝ հաճոյք մը կզգաք: Դուք, կուսակցութիւններդ, ի բաց թողած ժողովրդի գրական ուժի կեղրոնացումը և նորա կենսական պետքերը, անձնական մանրակրկիտ հաշիններով զբաղուած էք: Կարծեմ անկեղծ գործողի մը խիղճն հանգիստ կը լինի այն ժամանակ, երբ մինչեւ իւր կենաց վերջին կաթիլ իւր ամեն ջանքն, քիրտնու արիւնն նուիրած է հասարակութեան ընդհանուր շահերին և ոչ եսական ձգտմանց, անձնական հաշուոյ ևն: Արդեօք այլ ևս ինչ կը նշանակէ ձեր այդ երկայն ձառներ ու խմբագրականներ, կարծես գրելու նիւթբնաւ չը լինէր. . . Մենք այսցափ նահան մի թերթ գրական ժողովրդին է արել, ամեր նահանները ու թղթակցութիւնները իւրացրել ևն են: Դա բարոյական մահ է, նա մանաւանդ այն պատճառով, որ Հիւ կուսակցութիւնը լաւ դիտէր ու չէր կարող չը դիմանալ որ թղթակցութիւնները չեն ժողոցուած, չեն իւրացրուցած. քանի որ այդ կէտն լաւ ևս յայտն էր Աստրապատականի և Կովկասի ներկայացցէն:

Եւ մեր նպատակն է ոչ մի միայն թշուառութեան մատնուած ժողովուրդը թուրքի վայրենութիւններէն աղատել այլ նոյն իսկ թէ փիղիքական և թէ բարոյական բռնութիւնների գուղքերը:

Թող պարծի ինքը ժողովուրդը, թող հանգստանայ ժողովրդի խիղճը, թող նայի իւր աքսորեալ, բանտարկեալ որդեսց, թող աչքը յառէ դէպ ի կախաղաններ, դէպ ի Հայաստանի հովիտն ու ձոր, ահա այնտեղէն է, որ ժողովրդի արեան գործութեան նուիրուած էր: Եւ այդ անձնական կապի շահուց արդար պաշտպան, նա իւր կեանքը նուիրեց ժողովրդի գլուազ կապահանդին և կապահանդին կապահանդին և լուտանք:

կը պեղայ. . .

Բաւական է, պարուններ, բաւական է, ժամանակ է զգալ ձեր տամարդի ընթացքը: Ժամանակ է զգալ որ Սասունի 10,000 նահատակների ձեռին, 8-10 հրացան միայն տալու կարողութիւն ունեցաղ մի կազմակերպութեանը՝ ի՞նք զի՞նքը փիղ նկարել, իսկ Սասունի բարձունքը քանդող, աւերող ամեհի գազաններին՝ քոթոթ, դա միայն ծաղրածուների գործ է: Քոթոթ է նկարուած նաև դաշնակցութիւնը, որը՝ եթէ քիչ էլ է գործ ել, գոնէ համեստութիւն է ունեցել չը գուալու ընթերցողների ականջը խլացնելու չափ՝ „Մ ե՞նք զարկինք“, „մե՞նք զարդեցինք“... „Մ ե՞նք“... շարունակ՝ „մե՞նք“...

Եւ դու, Հայ Յեղափոխակ: Դաշնակցութիւն, որ ինք զի՞նքը կը յորջորջես այդ խոշոր բառերով, արդեօք խղճի խայթ չե՞ս զգար, երբ Մուրատի երեսին փակեցիր քո դուռը, անօգնական թողիր նրան: միայն այն պատճառով որ նա պատկանում էր Հնչակեան խմբին, այսինքն առիթ չէր ունեցած քեզ հետ անձամբ ծանօթ լինելու: Եւ թողիր դու, որ նա դատարկաձեռն դառնայ ապագայ — այսորուայ ողբերգութեան տեղը... Միթէ զայդ կը պարտաւորեցնէր քեզ քո „Դաշնակցութիւն“ մեծահնչիւն անունը: Ո՞րտեղ է, ուրեմն քո ոդաշնիքը“, ուր է քո կոչման բարձրութեան վրայ գտնւիլու երբ յեղափոխականների լաւագոյնի կարկառած ձեռքում: . . քար միայն դրիր հացի տեղը...

Ընորհակալութիւն գաւառներին. . . Նորա գիտցան բուն դաշնակցական լինելը, նորա գրկարաց ընդունեցին վշտացած հերոսին իւր ընկերներով և նա մոռացաւ ձեզկից ստացած վիրաւորանքը, մոռացաւ նա, որովհետեւ սիրութ լի էր իսկական սիրով սիրով դեպ ի թշուառ ժողովուրդը, որը իրեն կսպասէր. . . Այո, անմահ Մուրատի „Մեղքը“ միայն անոր մէջ կը կայանար, որ նա „անպայմաններիցը“ չէր: Անպայման Հնչակական է պահանջում լինել՝ Հնչակը, այսինքն գիտնալ բուլը Դաշնակցականներին գրական ական գողենը, աւազակներ անուանել գիտնալով Հանդերձ, որ դա՝ զբարարութիւն է, սառը զբարարութիւն. . .

Անպայման Դաշնակցական լինել է պահանջում նաև Դաշնակցութիւնը, այսինքն հայ հոյել Հնչակականներին աջ ու ձախ, չը խնայելով նոյն իսկ Տամատեաններին, Մուրատներին, գիտնալով Հանդերձ, որ նորա հերոսներ էին. . . Բաւական է. . .

Ի՞նչ ունիք բաժանելու եղբայրք. . . Թողեք, դա Տամատեաններին և Մուրատներին, Վարդաններին և Մարգարներին, Զաքարեաններին և Լեռններին — նաև Արաբօններին է սեփչական. . . Դրամ. . . 2% որ Ղազարոսի պէս աղքատ էք երկուսդ էլ. Համեմատելով գործի յանհունս մեծ պահանջների և անմիջական կարենների հետ:

Ի՞նչ ունիք, ի՞նչ. . . Ո՞րն է այն գաղափարը՝ որը ձեզ ի միմեանց կը ջոկէ, ի՞նչ կէտի վրայ է ձեր հասկացողութիւնների մէջ եղած աարքերութիւնը, որ դուք ձեր ողորմելի պյերը միացնելու տեղ կը ջւատէք, և ձեր պաշտպանութեան յանձնուած թշուառ ժողովրդի տունը հիմնայատակ կը տապալէք. . .

Ամօթ է յանցանք է. . .

Դժոխ

95 Յնս. 13

Մայիս ամսոյ մէջ Հ-ի և Դ-ի կուսակցութեանց Մուրատին և իմ հայեացքները պարզած եմ մի յօդուածով՝ զոր զոկած եմ երկու թերթերին էլ. այսպէս թէ այնպէս ի մօտոյ գիտակից լինելով ճշմարտութեան նոյն յօդուածի մէջ գրուած մի քանի կէտերու մասին կանեմ հետեւեալ գիտողութիւնները. . .

Ա. Ծանօթանալով Դաշնակցութեան Ծրագրի ապակեդրոնացման, ճշմարտութեան դէմ մեղանչած կը լինիմ, մեղադրել ամբողջ Դաշնակցութիւնն՝ Մուրատին ձեռք չը կարկառելու առթիւ, քանի որ միայն Տ. . . ի խումբը մերժել է նրան իբր անպայման Հնչակեանի... . .

Բ. Դաշնակցականները՝ կուսակցական լինելով մէկտեղ, նրանք հայհոյում են Հ-ի կեդրոնին, խմբագրութեան, և անձնական կրթերից կուրացած Պօպտախոսներին, մինչդեռ կը յարգեն բոլոր անձնուրաց գործիւները՝ խստովանելով որ նրանք հերոսներ են:

Դժոխ

Ծանօթութիւն

Իսկապէս արժէր կանգ առնել Դժոխիքի նամակի մի քանի կէտերի վրայ, որոնք ուշագրութեան արժանի են, օրինակ՝ ոոչ մի գաղափարական տարբերութիւն չկայ և այլն՝ խօսքերը, կամ թէ այն տեղը, որտեղ հեղ կուսակցական բաժանումներին է վերագրում: Սասունի աւելացների տակ ծածկւելը և այլն: Բայց արդէն „Դրօշակի“ № 2-դում ասել ենք, որ ներկայ սոսկալի շօջանում չենք կարող զբարուել պատիսի հերքումներով և այլն: Եթէ մենք տպագրում ենք Դժոխիքի նամակը, դա՝ թէ ճշմարտութիւնը երևան հանելու համար է և թէ նորից „Հնչակի“ երեսին խիելու իւր խաբերայութիւնը և կեղծիքը, որովհետեւ Դժոխիքի առաջին նամակը լցու տեսնելուց յետոյ նա փոխանակ ամօթից լուելու շարունակեց անսամօթաբար իւր հին երգը երգելու...

Մի բան միայն մենք անհրաժեշտ ենք համարում ասել որ Դժոխիքի ներկայ գրութիւնից և լրացուցիչ բացարարութիւնից աւելի է պարզում մեր յարաբերութիւնը Մուրատի հետ, փաստը նրանում է, որ Տ. կօմիտէն մերժել է նրան օգնել իբրև անպայման հընչակեանի: Ծիծաղելի է սրա մէջ որ և է յանցանք նկատել. ի՞նչպէս կարելի է պահանջնել մի կազմակերպութիւնից, որ նա օգնի մի անհատի, երբ այդ անհամը լինելով անպայման կուսակցական, չի կամենում ոչ մի հաշիւ տալ իր գործունելութեան մասին և գտնւել ընկերական փոխագարձ յարաբերութեան մէջ: Դաշնակցութեանց պատկանող անհատներին ու խմբերին, որոնք տարբերելով մեղանչից տեսական մի քանի հայեացներով գործնական ասպարեզում կը գործեն մեզ հետ համբարձն կերպով և կը գտնեին մշտական ընկերական յարաբերութեան մէջ: Մեր միւս կօմիտէները հենց այդ պայմանով են համաձայնուել օգնել Մուրատին և եթէ Մուրատը ներկայանար նրանց այնպէս ինչպէս Տ. կօմիտէին, այսինքն իբրև անպայման Հնչական, ոչ մի գաղափարական կօմիտէ չէր համաձայնուիլ նրան օգնել.

Դժոխ